

ամենայնիւ պէտք է ասէինք թէ զա կախած է ազգի բարի կամքից... բայց ի՞նչ պէտք է ասենք տեսնելով թէ մի որ և է Ներսէս իրան իրաւունքը է համարում կամ մայական կերպով շարժել ամբողջ թանի ունեւրի տակ ամբողջ ազգի ամենաթանգապին իրաւունքները..

Եթէ հայոց ազգը թիւրքիւս յում իրան ճշմարիտ սահմանն ազգը համարէր, նա կարող էր թիւրքաց ընդհանուր սահմանադրութիւնը բարեւել առանց ստորանադու, իր անձնական պատիւն ու յարգը պահելով: Հայերը պէտք է բարեւէին և ընդունէին ընդհանուր թիւրքաց սահմանադրութիւնը իրանց գերագոյն ցուծեան ինքնաձանադութեամբ, որպէս ինչ սահմանադրական ազգ, որ բարեկամական կերպով ձեռք է մեկնում դէպի թիւրքաց նորահաս ընդհանուր սահմանադրութիւնը:

Մենք միշտ ասել ենք որ թիւրքաց հայերի սահմանադրութիւնը մի խաղաղք է Կ. Պոլսի բուրժուազայի և հոգեւորականներին ձեռքում, և որ նա ոչինչ իրական իրաւունքներ չէ տալիս ազգին, որ դա մի երեւակայական սահմանադրութիւն է: Եւ ասա այժմ, ցաւելով տեսնում ենք, որ մենք ուղիղ ենք նայել գործին.... Ի՞նչ սահմանադրութիւն է այն սահմանադրութիւնը, որին ամբողջ երէք միջոցից բաղկացած ազգը տաւ հինգ տարի վայելելուց և նրա

համար ծանր քրտինք թափելուց յետոյ, մի քանի մէջ աննկատելի կերպով կորցնում է մի շահաւէր, կեղծաւոր վարդապետի կամայականութեան շնորհով:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՆԿԻՐԱՎԱՍՏԻ ԿԱՆՈՆԱԿՈՐ ԶԱՐԳԱՅՄԱՆ ԲՆԱԿԱՆ ԱՐԳԵԼՔՆԵՐ

Մեր երկիրը, Անդրկովկասը, իր տեղադրական և կենսական կողմերից ունի մի քանի արգելքներ այդ և կանոնաւոր կերպով զարգանալու համար: Ցարկայ մէջ գրեթէ հինգ ամիս մեզանում անտանելի շոգ է լինում: Մի քանի օր մեծ կենտրոնների մէջ կանքը դառնում է անտանելի, փոքր ի շատ ունեւոր մարդիկ փախչում են քաղաքներից և տեղափոխւում են զինքը, բարձր դիրքով տեղեր, ամառանոցներ: Մեծ կենտրոններում մնացող չքաւոր բազմութիւնը տարվայ այդ միջոցին անընդունակ է նոյն եռանդով աշխատել, ինչպէս ձմեռ ժամանակ: Այլ թէ միայն Ֆիզիկական աշխատանքը գրեթէ կանգ է առնում, մնում է անշարժութեան մէջ, բայց և մարդու ուղիղ հրաժարում է իր աշխատանքի կանոնաւոր, բնական գործադատութիւնից: Ի՞նչ կանոնաւոր զարգացում, ինչ անշարժութիւն կարելի է սպասել այն երկրի մէջ, որտեղ մարդու ուղիղ էլ չէ կարող ամբողջ տարի ներգործական լինել, և տարվայ մէջ հինգ ամիս կրաւորական դեր պէտք է խաղայ: Մեզ կանոն թէ այն տեսակ բաների վրա, բնական երեւոյթների վրա, որոնց փոխելը մարդկային հասարակութեան ոյժերից վեր է, այդ տեսակ երեւոյթների

վրա իրար է խօսել անգամ, կամ նրանցից լրագրական յօդուածի նիւթ չենել...

Բայց մենք այդ կարծիքը չենք բաժանում: Մենք այն կարծիքին ենք որ նիւթական միջոցներով, գիտութեամբ և աշխատասիրութեամբ կարելի է բնութեան մէջն էլ շատ բան փոխել, որ սկզբից անհնարին էր երեւում փոխելու:

Մեր երկրի կենսան բոլորակն էլ փոխել, եթէ մենք աշխատենք մի կողմից խնայել ոչնչացնող անտանելիք, միւս կողմից մեր բոլոր ջանքը և նիւթական միջոցները չը խնայենք մեր երկրում նոր անտանելիք զարգացնելու:

Արիւ կողմից մեր երկիրը ունի անաշուղ տեղադրական դիրք: Մենք կապված ենք ռուսաց ամբողջ պետութեան հետ քաղաքական կապերով, բայց մի և նոյն ժամանակ բաժանված ենք նրանից բնական այնպիսի մի սահմանով, Կովկասեան սարերի ահագին շղթայով, որ տարվայ մէջ երկու երեք ամիս ծածկված է լինում խոր և անանցնելի ձիւներով, այնպէս որ մեր երկիրը, որ Ռուսաստանի հետ անմիջական յարաբերութիւններ ունի, ստիպված է տարվայ երկու երեք ամիս իրան բոլորովին կտրված համարել Ռուսաստանից, ուրեմն և մնացած ամբողջ տարւոյ մէջ աշխարհից, որովհետեւ մեր երկիրը իր առևտրական, փոստային և հասարակական բոլոր յարաբերութիւնները լրացուցած աշխարհի հետ մշտապէս պահպանել մի երկաթուղու միջոցով, որ անցնելով Կովկասեան սարերի ճանապարհով:

Բայց ինչպէս մենք ասացինք՝ անհնարին գրեթէ ոչինչ չը կայ մարդկային միացած ոյժերի, մարդիկներին ընկերակցութեան համար: Անդրկովկասը կարող էր յարաբերութիւնները լրացուցած աշխարհի հետ մշտապէս պահպանել մի երկաթուղու միջոցով, որ անցնելով Կովկասեան սարերի տակով, կը կապէր Ռուսաստանը մեր երկրի հետ:

Մենք կրկնում ենք՝ ի՞նչ զարգացում, ի՞նչ առաջադիմութիւն կարելի է սպասել մի երկրի համար, որի բնակիչները հինգ ամիս տարվայ մէջ չեն եղանակի շնորհով ուրեմն կենսական պատճառներով, որ և ինչ մտաւոր և ֆիզիկական աշխատանքին ընդունակ չեն, իսկ երկու կամ երեք ամիսն էլ երկրի տեղադրական, աշխարհադրական անաշուղ դիրքի շնորհով կտրված են մնում ամբողջ տարւոյ մէջ աշխարհից: Իսկ Փօթի-Թիֆլիսեան երկաթուղու ճանապարհը մինչև այժմ գրեթէ ոչինչ ծառայութիւն չէ ցոյց տուել մեզ մեր երկիրը ներառալիս մօտեցնելու, մեր ամեն տեսակ յարաբերութիւնները լրացուցող աշխարհի հետ կարճացնելու և հեշտացնելու համար:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ընթերցողը յիշում է որ փետրվարի 10-ին թիֆլիսի մասնաւոր մի տան մէջ տրվեցաւ յօդուած փոքր-Ասիայի հայերի սիրողների ներկայացում: Այժմ սիրողները որոնք մասնակցեցին այդ ներկայացման մէջ ուղարկւում են մեր խմբագրութեանը 22 բուրլ և 43 կօպէկ և խմբագրում են տպել հետեւալ նամակը՝ «Ինչպէս «Աշակի» ընթերցողներին յայտնի է, փետրվար ամսի 10-ին մի բնականաբան ներկայացում կար բարեգործական նպատակով: Այս ներկայացումից մենք կարգապահաբ հաւաքել 39 բուրլ և 15 կօպէկ, որ գումարից հանելով ծախսը, այն է 16 բ. 72 կօպ., մնաց գումար արդիւնք յօդուած մեր փոքր-Ասիայի հայ կարգապահների 22 բուրլ և 43 կօպէկ, որ սուր հետ և յանձնում ենք խմբագրութեանը» — Թիֆլիս, փետրվարի 20-ին, 1877 թ.

Մենք լսում ենք, որ հրէայ անհաղորդ Լաւրիսի խոսնակից փետրվարի 16-ին գիշերը գաղացած գրեթէ բոլոր իրեղենները գտնվեցան, և յանցաւորները կալանաւորվեցան:

Լսում ենք որ Կովկասեան սարերի վրա ճանապարհը մասամբ խտրված է:

առանց յուսաց նշանաւոր նախնիքն՝ անոնց գրականութիւնը՝ անոնց փառքն և ազգային անկախութիւնն ունենալու, գիտնական գրական և քաղաքական աշխատասիրութեանց մէջ անորոշապէս անոնցմէ ետև կուգան, մինչդեռ չառ յառաջ գալիս են քան զմահապաշտ՝ որոնք գրական մեծահարուստ աղբիւրներ ունեն իրենց ձեռքը: Տիրալ ջիւղին հետ հայոց յարաբերութիւնը միշտ քաղաքավարական և խոհեմական եղած է, և այն առ հարկի:

Եւրոպացի հեղինակներ, ճանապարհորդներ և լրագրագետներն ամենք կը պնդեն թէ հայք կը ցաւին Օսմանեանց ի վատթարութիւն գիտնական վրա, բայց ասի սխալ դատարար մը է: Հայը այն նոյն իսկ եւրոպացուց վրա երբեք փառհաւթիւն ունեցած չէ, զանոնք զինքը մասնակցութեան կապով կապակցելու տարրը մը նկատելով: Տարաւորը չը կայ որ իր այս նկատողութեանը մէջ կարգադրանալ, որովհետեւ ամեն մարդ պիտի թէ ժամանակաւ նոյն իսկ անդլիական դեպքան մը իր իսկ խնդրանքը հայու մը կողմանէ գրուած մտերմական մէկ գիրը տարաւ: Այլ փառայի տուաւ: Առասի հայերը միշտ իրենց աչքերուն Միւսլիմաններուն հետ ճիշտ այնպէս վարուած են՝ ինչպէս որ Քուլթան Ապա-Իւլ-Աղլիլ պաշտօնակցն ու պաշտականներն անոր հետ կը վարուէին դաշնակցութեանց առաջ: Բնական չենք կրնար հաւատալ թէ մարդու անձնատիրութիւնը և պատուը զգացումը կրնայ երբեք մահաւալ կամ ոչնչանալ: Չենք կրնար հաւատալ թէ նուազագոյնն ու ցածագոյնը կրնան այն ատիժան ներքին համոզումներ և բնութեան մէկ մասն գտնուել որ մարդ ամեն օր և ամեն ժամ իր անձը իր կնոջ և զաւակաց բարոյական և նիւթական պատիւը բռնաբարեալ իր ազգն հարստահարեալ և իր կրօնըն ու շահը թշնամանալ տեսնէ և տակաւին գոհ և անտարբեր մնայ: — ոչ, ասի, կարելի չէ, և ոչ վայրկեան մը այդպիսի դատարար մը պէտք է ունենալ:

Թէպէտ հայ ազգը պարտաւորուած է ի հարկէ ստիպեալ խոնարհիլ, անկարելի է որ թիւրքաց անկեանք վրա նստի ողբայ, և ցաւն անոնց կործանմանը համար գոր իրենց հրաւիրած են իրենց վրա: Ար վախճանք թէ Անգլիա տակաւին լի-

մին համոզուած չէ այս առարկութեան ճշմարտութեանը: Երբեք հետեւ նոյն իսկ իւր այն քաջագիտացը մէջ՝ որոնք հաճախաւոր օգնելու պատրաստ են իրար, հակառակ են այժմ, կը վախճանք որ այսուհետեւ պիտի գտնուին ամենք որք իրենց զարգացմանը մէջ պիտի տարբերեն իրենց համոզումները պիտի փոխեն, և տաճկական կառավարութիւնը կանգուն պահելու համար անգլիական ստալը վատնելու և անգլիական արիւնք թափելու նորէն կուտակից պիտի ըլլան:

Անոնք որ ասիէ առաջ հուսաւորաւոր ազատութեանը համար գործեցին, և միայն չորս միլիոնի գումարով մը յաշտեցան այն աշխարհապահ կանգնելու որ հիմա ապագայ մ'ունի, շատ աւելի խելացի էին քան զանոնք՝ որ 1854-ին չորս հարիւր հազար քրիստոնէի կեանքը զոհեցին, հարկաւոր միլիոններ վատնեցին պատերազմի համար, և երկու հարիւր միլիոն ալ փոխ ըլլալով վրա տալին: Եւ ինչո՞ւ համար. պարզապէս անոր համար որ զհաճախաւոր՝ որուն համար այսպիսի գործողութիւններ ըրին ներկայ դառաւ մեալ վիճակին մէջ տեսնեն: Ար վախճանք որ Անգլիոյ մէջ շատեր այսօր մի և նոյն մեծածախ գործողութիւններն ընել ուղին նմանօրինակ աշխարհին հետեւանքները քաղելու համար, ի՞նչ պատճառաւ:

Վասն զի հաճախաւոր բնակիչները՝ ըստ մասին մահաւախան և ըստ մասին բրիտանեաց նախաձեռնութեան և օրտակութեան վիճակին մէջ են և պիտի մնան յաւիտեան, և այս այլապէս տարբերը անհաշուելի թշնամութեամբ անմիջապէս պիտի վառուեն իրարու: Դէմ երբ յարտաբուռ հարուած մը գայ:

Վասն զի ապակաւութիւնն ու կաշտակերութիւնը հասարակաց պաշտօնեկց բոլոր դասերուն մէջ այնպէս խորին արմատ ձգած են որ պաշտօն, պատիւ և չքանչան ցարդ զարդան ածուրդով կը վաճառուեն, այնպէս որ կայսրութեան մէջ ամեն գիւղ, քաղաք և գաւառ մարդոց ամենէն տղէտներուն և անպատաններուն ցանկութեան և հարստահարութեանը զոհ կըլլայ: Սուլթան Համիտ Բ. նոյն իսկ Մեծն Կիտրաւ չըլլար, չենք կրնար հաւատալ թէ պիտի կարենար իրաց այս վիճակը դարմանել: Կեանքը

դուներ թէ մահաւախանաց համար գերմարդկային գործող գործութիւն մը կայ, և մահաւախանութիւնը քիչ առնեն յԱսիա պիտի դառնայ, քիչ այն քրիստոնէին որ մինչ այն առնէ չէ կրցած զինքն անոնց լուծելն ազատել:

Արդ՝ կրնայ հարցուել թէ հայն ինչ կանխակէ և ինչ են իրենց յոյսերը:

Հայը որ չորս դարեր շարունակ բազմազան փոփոխութիւններ և աղէտներ կրած է, այս զէպրեւուն վրա անխառն հանդարտութեամբ կը նայի, վասն զի ամեն բան ձեռքէն գացած ըլլալով կը խորհի թէ ալ եւ կորսնցնելու բան մը չունի: Մէկ խօսքով եթէ թիւրքաց յԱսիա դառնալին յետոյ անոնց վարդապետական կամ վարմանցն համար հոն ապրելն անկարելի ըլլայ հայոց, պիտի պարտաւորին անցնիլ ի Ռուսիա, որն որ Հայաստանի և Փոքր-Ասիոյ մէջ քրիստոնէական միակ պաշտպանը նկատուած է հիմա: Ռուսիայ հայերը՝ որ իբր քառասուն տարի առաջ խորին աղիտութեան մէջ ընկղմած էին, այժմ բարոյական և նիւթական զարմանալի յառաջադիմութիւն կը ցուցնեն: Ռուսիոյ մէջ հայ բնակչաց թիւը որ 1830-ին եղած աղգահամարին նայելով 350 հազար միայն կը հաշուէր, հիմա 800 հազարէն աւելի կը հասնի: Մշակութիւնն ու ձեռարկուեստը կը ծաղկին անոնց մէջ, զրգրողներ կը յիշտուին և կը շատանան: Մինչդեռ 1840-ին բնաւ լրագիր չունէին չորս կամ հինգ կտոր լրագիր ունեն այժմ հայերն լրագրաւ: Ժողովուրդն որ բոլոր օրէ կը հարստանայ, և ռուսական վարժարաններէ ելնող աշակերտաց թիւը զօրեղապէս կը բազմանայ:

Թէ և Կովկասու մէջ հայերն ազատ են զինուորագործութենէ, շատեր կան որ կամովին ռուսական բանակը կը մտնեն և իրենց հաճախուն ու քաջասիրտութեանը շնորհիւ չուտով ամենաբարձր աստիճաններու կը հասնեն: Հիմա ռուսական բանակին մէջ ճիշդ քսան և վեց զօրապետ կան ի ծնէ հայ:

Մինչդեռ երբեմն խորին աղիտութիւն կը տիրէր Եւմիսմալ մէջ, այժմ ներկայ կաթողիկոսը ընդարձակ զրոյց մը չինած է առաւել եկամուտով, և ուսմանը ընթացքը մեծ յոյս կուտայ: Այն կողմերը միայն սակաւամթիւ քաղաքներ կը գտնուեն անխառն հայ բնակչօք, ինչպէս է

Աղեքսանդրապոլիս՝ Ախուրեան գետին վրա. այն վիճակներուն մէջ հայերն խիստ ազգու բնաւորութիւն մը կը ցուցնեն, որն որ իրենց լրագրացը մէջ կերելի: Անցեալներն անոցմէ մին՝ «Մշակ» որ հիմա ինչ կը հրատարակուի՝ հայերն ապրատմութեան հրաւիրեց, և արհամարհական խօսքերով դատապարտեց անոնց անգործութիւնը, հաճախաւոր հայոց հարստահարութեան մէջ հաւատարմով, բայց սակաւի պատկերը նկարագրելով գոր կը վերջացնէր սա խօսքերով, «Եթէ ձեր կեանքը ձեր ազատութեան համար չէք կրնար տալ, երբ մեզի եկէք»: Թէ ռուսական Հայաստանի նիւթական վիճակը հաճախաւոր հայոց վիճակին անհամեմատ կերպով լաւագոյն է, ասի անուրանալի իրողութիւն մը է: Մինչդեռ հաճախաւոր մէջ ծածկաներ չը կան, Հայաստանի այն մասին մէջ որ Ռուսիոյ կը վերաբերի՝ արեւուն պողոտաներ, երկաթուղիներ, կամուրջներ և հասարակային շինութիւններ կը վրտան և ըստ ամենայնի կենաց և ստացուածոց ապահովութիւն կայ:

Եթէ Անգլիա իւր փողովոյեան բնածին մարգարտութեան թիւրքաց իր աղիցեութեամբը գոնէ Կիլիկիան հայոց վերադարձնէ, ուր թաղաւորական գաւէ մը գաւ հայրապետական ավիտ մը տակաւին կը կենայ աւերակաց մէջ, — եթէ Անգլիա անոնց վերադարձնէ հաւրոսի դաշտերը՝ որոյ զաղաթանցը վրա քանի մը տարի առաջ հայր ակամայ կուեցան և հալածեցին: Աղլի փառայի զօրերը և ապա իրենց քաջութեան հետեւանքն փախալով իրենց ազգաւորն ու հաղապարտութեամբը յաղթելովն յառաւմ ցածուցին, — եթէ Անգլիա այսպիսի մեծանշանական գործ մը կատարէ, գոհութեամբ պիտի տեսնէ որ հայերը պիտի դառնան իրենց նախահայր երկրին մէջ գոմարուեն, և արեւմտեան քաղաքակրթութեան շաղկին մէջ արագաբայլ յառաջադիմելով իրենց երախտագիտութիւնը պիտի յայտնեն, այնպէս որ արեւմտեան Եւրոպիոյ հետ ձեռք ձեռքի պիտի յայտնեն և զիտութեան շահը պիտի տանեն միջերկրականի ծովեղեկայ երկրներուն վրա:

Լոնտոն 8 դեկտ. 1876 Հայ մը

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԲԻԱ

Ձերնոգորիայի հետ գնադարարը երկա-
րացրած է դարձնել 20 օրով:—4. Պօլսից
հեռավորում են որ այժման մեծ-վերին Եր-
զնափայլի պաշտօնից հրաժարելու լուրը
անհիմն է: Պարիզի քաղաքական շրջաննե-
րում կարծում են որ խաղաղութիւնն յոյսերը
աւելի և աւելի հասանալիութիւն են ստա-
նում և որ Անգլիան կառավարիչ տալ Թիւր-
քիային մի յայտնի ժամանակամիջոց, որպէս
զի սուլթանից չնորհված վերանորոգութիւն-
ները գործադրվել կարողանային: Բերլինից
հաղորդում են որ գերմանական կայսերական
կանցլեր իշխան Բիսմարկի վճռեց չը հաղոր-
դել Բալխաստգլին արեւելեան ինքրին վերա-
բերեալ պաշտօնական թղթերը:

ՍԵՐԲԻԱ

Թիւրքիայի և Սերբիայի մէջ, ինչպէս հա-
ղորդում է հեռագիրը, կայացաւ համաձայ-
նութեան խաղաղական պայմանների կապելու
մասին: Յրեի խաղաղութեան պայմանագիրը
ստորագրված կը լինի 15 (27) փետրվարի:
Սերբիական ազգային ժողովը վաւերացրեց
խաղաղութեան պայմանները սկզբունքները
և ինքն փակեցաւ: Դաշնագիրը պարունա-
կում է հետեւեալ պայմանները՝ status quo,
պատերազմը չունի ներդրութեան յայտնելը,
Սերբիայի երկրի մաքրելը Թիւրքաց զորե-
րից, 12 օրվայ ժամանակամիջոցում Գլոր-
նիկի մասին և Բելգրադում Թիւրքաց ներկա-
յացուցիչ մասին ոչինչ չէ յիշված: Յետոյ
Սերբիան առանձին նօտայով (պաշտօնական
թղթով) կը յայտնէ Թիւրքիային որ ինքն
խոստանում է նոր ամրոցներ չը կառուցանել
Բելգրադում նորից կանգնեցնել Թիւրքաց դը-
րօշակը, տալ իր հպատակ հայերին և հը-
րէականին միւս հպատակներին հաւասար
իրաւունքները, երբէք չօգնել ապստամբներին
իր պաշտպանութեամբ և արգելել Բ. Կրան
հակառակ ուղղութիւն ունեցող Սերբիայի մէջ
ընկերութիւնների կազմելուն:

ԹԻՒՐԲԻԱՅԻ ՀԱՅԵՐԻ ՏԱՆՁԱՆԵՐԸ

Տիրապետութեան դեկտ. 25 թուով դրուած
նամակ մը՝ նոյն ամսոյ 15-ին, Սասուն գա-
ւառի Հազոյ գիւղաքաղաքի գանձապահ (սան-
տրէ Էմին) Յակոբ աղայի, և նորա եղբորդի
Սարգսի չարաչար սպանուած ըլլալը ծանու-
ցած, և սպանեալ Յակոբ աղայի ամուսնոյն
կողմանէ Տիրապետութեան երեւելի ազգանոց մէ-
կուն դրուած նամակին պատճէնը գրեմ է
առ մեզ, հրատարակելու և կայսերական կա-
ռավարութեան ուղարկութիւնն ու գլխու-
թիւնն հայցելու համար:

Աւստիլ բառ առ բառ կը հրատարակեմ
նամակն, զոր կարելի չէ ընթերցուլ անթաց
աչօք:

Եւր փութամ ծանուցանել մտերիմ և մե-
ծապատիւ բարեկամիս, որ դեկտ. 15 թիւ
առհաճ իրերին Նիկոյնց Սերբիին Մահ-
մուտ Գլորիոյ տղան Ալեգոն և մահաբու Տո-
վուտի եղբայր ծնունդ և իւրեանց մարդիկ-
ներով մէկտեղ, քան հօգու չափ, Հազոյ բա-
րեկամարար մեր տուն եկան, յանկարծակի
պեղծաբան զմարդ և զմարդիս սպանեցին:
Ամենք որ զԹիւրքիանու ծայն լսեցանք ինչ
եղբաւ լսեցանք եղբայր զնոցնք որ զմեր աչքը
բոցոյցացած էին. զմեզի որ տեսան այս ան-
գամ մեր վրա դարձան, որ զմեզի սուրի բեր-
անէն անցունեն, ու մենք վախճալով՝ բարեկամ
ներու աներկն մասնք, իրենք վերջիշեալ
արեւմտաբարձեր, անտառուածներ, անտանայի
եղբայրներ տուն կը մտնան զանաւորներ կը
փորտեն, ինչ ոսկի, ինչ արծաթ, ինչ ձեր-
անի փառայ որ հոյով էր բարեկամ մեր հա-

գուսաներով մէկտեղ կանեն, ինն հօգի
«Իւրմէն իրենց իշոց բռնեալու պէս իրենց
քեռ քեցին, շարկեցին ու գնացին որ սահաճ
հինգն անցնէր էր:

Սե ի տուն յիտին աղքատութեան և
վճռաւորութեան մտանք, որ արեգակա խա-
ւարեցաւ, լուսին մթացաւ ու թշուառ ան-
ձինս սուգ հասնելուն համար վայ և վայ կը
ժպտան, և բացի Աստուծոյ ուստեքէ անօղ-
մական եղնալուսն ասկա, և դուք եղբայրներ
ու քոյրեր զմեր ազգեղեաց քրոջը ի նշան
պարտի միթիթարէք, զիմ թշուարացելոյն սուգ
հինգէս պիտի փառատեք որ անխաբարեւ
է. եղբայրներ քոյրեր, որ անաստուած քովը
անհոգու եղած Տովուտի եղբայր ու Մահ-
մուտ տղան ու իւրեանց մարդիկներով եկան
փնծի սուգ հագուցին. ես ան տուն պիտոր
միթիթարութիւն երբ լսեմ թէ Տովուտ այնտեղ
ստատակեցաւ, ու ծնունդ ու կրեցն ալ այս
տեղէն բնութիւն իւր հետ եղող մարդիկնե-
րով իրենք ալ ստատակին. ան տուն պիտոր
միթիթարութիւն, ցնծամ ու զուարճանամ, որով
հետեւ սիրտս կրակ է մտնի ու կայրի որ զաղ-
քատանց և զհիւրապատուող տունս աւե-
րակ դարձուցին. և կը ինդրեմ որ չը մեղա-
ադրէք ինձ, թէ որ կամք Տեառն օրհնեալ
եղեցի ալ կրեմ, բայց սրտիս սուգը հէչ չե
սփարատուի, ինչպէս որ զսիրելիս Թիւրքի-
անով սպանին ու սրբով կարատեցան, այն-
պիտի որդիներ մահ, ինչպէս սրբոյցս պա-
տահեցան, և զԹշուարացեալ քրոջն ձերում
զգուգ փարատեալ ջանացէք բարեկամներ,
ու աղանջող ձերում քրճաղբաց. և արու-
մութեան ու բարեկամութեան գրեթէ թէ
ճակոբ աղան ողջ է խնամ, մի փախար
այսպէս թշուառիս գրեթէ մաղթութեան գրե-
թէ, որ սուգս անցնի որ սրտիս տրտմու-
թիւն փարատուի. այսքան թող բաւականա-
նայ, մտերիմ բարեկամք, դուք ողջ կեցէք:

(Նոր Կար)

ՆԱՍՏԱԿ ԹԻՒՐԲԻԱՅԻ

Վան 19/31 դեկտ.

Մտիւրում եմ այս անգամ աղեկաբար լուրեր
հաղորդել ձեզ: Կարծես թէ Հայաստանցիները
դատապարտուած են իւրեանց գրեթէ միշտ ար-
տաւորութիւն մէջ թափելով գրեթէ երբեմն կարտա-
սուէինք թէ թուրքերը Սամանեան կառավարու-
թեան քաջակերպով կը կողոպտեն միշտ և կը
սպանեն հայերը. այժմ նոյն իսկ կառավարու-
թեան զօրքերն են որ բացարձակապէս կը կո-
ղոպտեն դեմք և կը սպանան որոյ ճարակ տալ:

1876 դեկտեմբեր 11-ի զիշերով վան քաղաքի
պատմագրութեան մէջ բացեղէն տառերով գրու-
վեցաւ: Այն քաղաքը որ Հայաստանի մէջ իւր
ճիւղութեամբ և չնտիութեամբ կը պանծար, մէկ
զիշերով մէջ յանկարծ ողբակից դարձաւ Անի
քաղաքին. հրդէս, կողոպտու և սպանութիւն,
այդ բառերը սոսկալի երբորդութիւն մը կաղ-
մած էին, զոր ամեն բերան կը հնչէր սարսափա-
հար զօրքոյուն չլթամբք. կարծես թէ Վէնիկէ
մուրի սե օրերուն դարադարձը կը կատարվէր
նոյն զիշեր և վանդաներու ուրուականներ իւ-
րեանց պատաններով գերեզմանէն դուրս ելած,
կը հրդէսէին ամեն կողմ. ժամը 2-ի միջոցներն
էր երբ Ալեքսանդր 1) գտնուող հայեր սկսան
նշմարել թէ մի հրդէսի բոց կը ծաւալի երկնից
երեսը. գրեթէ ամենն ալ կարծեցին թէ մօտա-
կայ գիւղացեաց խոտի զէշերը կայրին որ յաճախ
կը պատահի քուրդերուն ձեռքով. բայց այն սոս-
կալի հրդէսը որ քաղաքին չուրայն կը ծարակէ
եղեր, մէկուն մտքէն ալ չէր անցնէր, զի այդ-
պիտի բան երբէք չէր պատահած վանի մէջ:
Գոյժը սկսաւ քաղաքէն Ալեքսանդր տարածուել
և անաղան ուրեմն աղետաւոր հայեր սկսան
քաղաք թափել խուռնեղամ և դարձանքով տե-
սան թէ լրացաւ պահանջարկ զօրքերը. ոտի-
կանները, զինուորները և թուրք ժողովուրդը
միացած, տապալներով կը խորտակեն հայոց
խանութիւնները և զործանեանները, և ջահեր
ձեռքերէն կը խուզարկեն ամեն կողմ, կը կո-

1) Ալեքսանդր 1 ժամ հեռի է քաղաքէն և դը-
րապատակել գեղեցկութիւն ունի: Վանեցեաց
մահաւանդ հայոց մեծագոյն մասը այստեղ կը
բնակի թէ ամառ և թէ ձմեռ:

դպրակն դրամարկները, ծանրագին բաները և
հաշուաւորները և հրձիգ անկող գուրս կը-
նեն: Կառավարութեան պաշտօնականներէն ալ
թէ և ոմանք ներկայ, բայց իբր անխաբար
թուրքաց կառավարութիւնը, լոկ հանդիսատես կը
լինեն և ոմանք ալ կը քաջալերեն իսկ Տեղադր-
պատրարարական փոխանորդ գեր. Նրեմիա կալի-
կապու և նախկին առաջնորդական փոխանորդ
Պօղոս վարդապետ որ զիշերով վաղեմի չուրայն
եկած էին հրդէսին սոջնեւ սոջնեւ համար,
սուլթանի հարուստներով չարաչար կը գանդակով
զօրքերէն, ի ներկայութեան կառավարութեան
պաշտօնակից: Զօրքերէն ոմանք կը յանդիմ-
մինչ և իսկ սուրբ քաջելով յարձակել նոցա վրա
և սրախոյրող անել սպանալ, եթէ ուղեն հայոց
խանութիւնները հրդէսէ և կողոպտուած ազաւա-
Հայերը թէ և անգլի, անպատրաստ, և չուրած
մնացած, բայց մահը աչք անած կուգին իւրեանց
խանութիւնները և վաճառքները ազաւալ. զօր-
քերը սուրբներով և հրացանի բռնեղով կը հա-
րուածեն գնաւ, որով ծանրապէս հիւսնաւորաց-
ներ, յիմարացողներ և մեռնողներ ալ եղան: Այս
կերպով հալու ամանք մի քանի ծրար վաճառք
աղաւանջին, բայց մեծագոյն մասը և ոչ չէր մը
կրցաւ ազաւալ: Հաղաբարտ ոսկու տէր եղող
հայ վաճառականներ և արհեստագործներ այսօր
միթիթի վրա մնացած են և 100 դրոշ չունեն
իւրեանց գրպանին մէջ, զի իւրեանց ունեցածը
դրամ և վաճառք՝ ոչ թէ տունը այլ չուրայն կը
պահէին իբր ապահով տեղ. տունին մէջ՝ այս-
տեղի սովորութեան համեմատ՝ արդէն պա-
րատուած ուտելիք կը գտնուի քիչ մը, բայց մի-
քանի օրէն յետոյ այն ևս կը սպասի, յայտնա-
մին պիտի անենք: Քաղաքութիւնը արդէն իսկ
սկսած է իւր վերջին ծայրը հասնել. առեւտու-
թեան թուրքովն ալ խանութիւններ կամ պարտա-
կէն և կամ խորտակուելով բոլորովին կողոպ-
տուած. իւր երկման նախին և ինչ ծախին. ոչ
չուրայ կայ, ոչ վաճառք. այս հրդէսին պատճա-
ռաւ հայոց եղած նիւթական միասը գրեթէ
4,000,000 օսմ. ոսկի (28,000,000 փութ) կը
հասնի: Վան կործանուեցաւ, այլ ևս չոյս չը կայ
որ վերականգնի թուրք կառավարութիւնին տակ:
Հայաստանի մէջ կարծես միայն այս քաղաքն է
ուր հայերը այլազգիներէն աւելի բազմաթիւ են,
թուրքերը այժմ դայս ալ աւերեցին և արդէն
ճնշուած հայերուն քով կարողութիւն չը թողու-
ցին: Այլ Ռուսաստանի հայերէն օգնութիւն չը
հասնի, մահը միայն բաժին մնացած է մեզ: մահ
գոր մի կողմէն մահամեալաններ կը սպանան
մեզ և միւս կողմէն սոջն ու անօթութիւնը: Այժ-
մէն իսկ շատ աղքատիկ տուններ անօթի մնա-
ցած են և քիչ օրէն մի քանիսն անօթի
սով կը տիրէ վանի մէջ: Ով որ հայ է, ով որ
մարդ է, վերջապէս ով որ իւր յուրքին տակ մի
սիրտ ունի, որ կը զգայ, կաղաչեմ որ օգնու-
թեան հասնի մեզ: Մահամեալաններ մեր ամեն
ունեցածը կողոպտեցին և այժմ ևս կը սպանան
սրախոյրող անել զմեզ. մեր միակ յանցանք
քրիստոնեայ լինելն է, մահաւանդ հայ լինելը, զի
ուրիշ քրիստոնեայ ազգեր գէթ իւրեանց դաւա-
նակից տէրութիւններէն կը պաշտպանվին, իսկ
հայուն պաշտպան չը կայ ընտել: Մեր աչքը յա-
նած եմք այժմ Ռուսաստանի վրա որ մեզ սոս-
մանակից քրիստոնեայ միակ տէրութիւնը լինե-
լով, կրնայ մօտէն տիրել մեր անտանելի թըշ-
վառութիւնը և յանուն մարդկութեան, յանուն
քրիստոնեայութեան ի գուժ չարմել: Քանի անգամ
կ. Պօլսի մեր Ազգ. պատրիարքարանը և Բ.
Կուրը հեռագիրներով և հանրագիրներով բողո-
քած եմք մեր կրած հարստաւորութեանց հա-
մար, բայց օգուտ չը լինեց զատ աւելի մեա-
սուած եմք. Բ. Կուրը մէկ կողմէն պատրիար-
քարանին միջոցաւ մի յոյսեր և խոստումներ
տալով կը խաբէ զմեզ, միւս կողմէն ալ կարծես
զաղանք հրահանգներ կը զրկէ տեղական կա-
ռավարութեանց որ աներկիւղ աւելի ստատկա-
ցունեն հարստաւորութիւնները և այնպէս ճնշեն
զմեզ, որ ձայնն ալ չը կրնանք հանել քուրդե-
րու համար: Մեր միակ յոյսը այժմ ձեռք վրա
մնացած է, անօթիսցի հայեր. եթէ դուք ալ ի
գուժ չը չարմէք ձեր արեւմտակից եղբայր ան-
տանելի վիճակին վրա, եթէ դուք ալ քարկէն
սիրտ և ոտած արին ունեցողի պէս լսեք մեր
այս քաջանքերը և անշարժ մնաք, եթէ ոչ է մի-
ջոյցի զիմեզ, մինչ և իսկ առեւտրական կառավա-
րութիւն ալ ձեր թախանախան ծանծարհացու-
նով, ձեր արտասուք ի գուժ չարմելով, մեզ օգ-
նութեան չը հասնեն, ալ գիտե՛ք թէ հայութիւնը
մեռած է այս կողմեր, ալ մի կարծէք թէ ձեզ
համարին և կրօնակից հայ եղբայրներ ունիք
այստեղ. Բայց սա ալ չը մոռնաք որ եթէ այս

կողմի հայեր յուսահատ թողուն իւրեանց պաշ-
տելի եկեղեցիները, ազգային չքնաղ հաստա-
տակները, իւրեանց տուն տեղ և ամեն բան
և որախոտանման քաղաքէն դաղմէն օտար եր-
կիրներ, և կամ կորսուին, սպառնալի պիտի
պիտի անցնի պատմութեան մէջ և ապագայ ու-
րունք պիտի կարգալ թէ վանեցի հայը իւր
վերջին դառն ճգնաժամին մէջ արատաւ օր օգ-
նութիւն խնդրած է: Ռուսաստանի հայերէն, իսկ
սուրբ անգլայ և անշարժ, զապած են նմա: Պիտի
կրնաք դուք ընդունել զայս. պիտի կրնաք, այս
տողերը կարդալէ յետոյ, այնչափ անգլաւ լինել
որ քնաւ չը մտածէք, մեր վրա: Թէ ցեղեկ ա-
տեն ձեր անձնական շահերով գրաւած, զմեզ
մօռնաք, զիշերները կրաղի մէջ պիտի երևալք
ձեզ, ձեր քուրդ պիտի վրդովեմք մեր անդա-
գար աղաղակներով և մեր ստակալ վիճակը պիտի
պատկերանայ ձեր աչքին առջև: Մինչ դուք
այդտեղ հանգիստ կը քնանաք, մեր այստեղ օրե-
քով զիշերները անբաւ կանցունեմք զօրքերէն
վանալով. զի չը կայ գիշեր որ մի հայու տուն
զօղ չը մտնէ: Եւ զիշեր թէ քրոջն են այս քո-
ղերուն մեծ մասը, քաղաքիս պահապան զօր-
քերը որք զիշերները չը կաղային իբր թէ զմեզ
պաշտպանելու համար, և այսպէս աղաւտօրէն
ամեն կողմ աչքն անցունելով, զվարութիւն աւե-
սած տեղեր կը մտնեն կողոպտել: Գող մտած մի
քանի տուների տնեցիք արթնան գանդակով
ազաւակ բարձած և հրացանը պարկելով դարցի-
ները օգնութեան կոչած էին: Գիշերապահ ոսախ-
կանները կառավարութեան կը բողոքեն թէ
մեր այլ ևս զիշերները պահապանութիւն չեմք
անել զի հայերը հրադէսը կը պարպեն և զօրքեր
բռնելու համար տուններն ներս մտած ատեն
կը վախճալք որ մեր կեանք վաճառուի: Կառ-
վարի փաշայն ալ կարգելէ հայոց միջոց իսկ
տան մէջ գող մտած ատեն հրացան արձակել,
այդ բանը պահապան զօրաց հսկողութեանը վրա
իբր կասկած, հետեւապէս նոցա պատուի իբր
արատ, և կառավարութեան դէմ ալ իբր ապրու-
տամբական ցեց համարելով: Կառավարի վա-
շայն իւր այս արդելքը յատուկ յատուկ հրա-
մանագրով հաղորդեց մեր ազգ. առաջնորդարանը
և այդ հրամանին համեմատ ալ պատուէր կար-
գացուեցաւ եկեղեցիները: Ալ աւելի դարմաւա-
րին կայ. մի հայ որ իւր ատեն զիշերային գող
մտած ատեն ազաղակ բարձած և հրացան ար-
ձակելով դարցիները օգնութեան կոչած էր, կա-
ռավարութիւնը սպառնացաւ բանտարկել զայն
իբր աղմկալոյց և հալու կրցաւ աղաւալ, պա-
տուաւոր երաշխաւորներ տալով: Այստեղի կա-
ռավարութիւնը որ թէ հրդէսին և թէ շատ հա-
րստահարութիւններու մէջ յայտնապէս զօր-
ծակցութիւն ունի, անաւ այսպէս տանտնը կը
բանտարկէ, փոխանակ զօրք բռնելու և բան-
տարկելու:

Բ. Կրան կառավարութիւնն ալ փոխանակ
պատժելու այս հրդէսն ու կողոպտող զօրքերը,
բաւական համարած է այստեղի միւթէս ար-
ք Գլորիինը (կառավարութիւն) վախու-
թեան (կառավարութիւն) փոխել: Քաղաքիս կա-
ռավարիչը որ բաւական ժամանակէ հետեւ մա-
համբ ճիւղեցէք, այս երկուշաբթի օր մեռաւ
և քիչ օրէն Զօրտաքի Մէհմետ փաշայի որդին
այստեղ պիտի գայ կառավարի պաշտօնով: հետե-
ւապէս վան իբր վաւառապետ քաղաքը աւելի
պիտի ամրանայ և աւելի շատ զօրքեր պիտի
գտնուին, այսինքն քաղաքիս մէջ գողերը աւելի
պիտի շատանան և քրիստոնեայ կեանքը աւելի
փտանգի պիտի ենթարկուի, զի մեր ստացած-
ները կողոպտող, չուրայն հրդէսն ու քրիստո-
նէից մահ ողաւանագողները՝ զօրքերն են ար-
դէն:

Թէ ամեն ժամանակ հարստաւորութիւնը ան-
պակաս էին այս կողմեր, բայց Սերբիայի և Բու-
ղարիայի ապստամբութիւնէն հետեւ, մահաւանդ
այս վերջերս որ Ռուսիայի և Թիւրքիայի մէջ
պատերազմը կատարեցին կան, թուրքերը օրնա-
րական արջիւրդ պէս յուսահատական կառա-
րութեան կը վարուին հայոց հետ և զօրք ալ
այդ կէտ վուրն երուսն կրօնակից էք ասե-
լով, ամեն չարք կը հասցանան մեզ: Թուր-
քերը իւրեանց կարողութեան վրա անպատահ և
յուսահատ ամեն օր կը կրկնեն մեզ թէ մեր
հանդուած եմք որ վերջապէս ձեր փնտն 1)
պիտի գայ այս կողմեր մեր ձեռքէն առնու-
ուստի մեր ալ կանխաւ: Գեղը՝ ուրիշ անցու-
նելով մեր վրէժը կը լսեմք, այնպէս որ երբ
ձեր սիրած մարդը գալ, թող այստեղ ձեր դիւա-
ները և փառապանք գտնէ տիրելու համար:

Ինչպէս որ անցեալ դարուն վերջերը երբ
1) Թուրքերը այստեղ ուսուր հայոց քեռին
կանուանին:

